

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԲ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
Չ Գուճ-Գաբու, Պատրիարքարան փողոց Չ

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Սէրվիլէն էֆէնտի	Ա. Արեւապետ
Յ. Մէրեքմ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Արեւապետ
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Զօպանեան	Գ. »

Ձեռնաստութեան դիւան

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Դաստիակութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւրքեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Տորթոս Ռափայէլեան էֆէնտի

Կալուածոց դիւան

Սէրտիս էֆէնտի Կիրտաղեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Յարաբերութեան դիւան

Գարեգին էֆէնտի Մէլիքեան
Միհրան էֆէնտի Զօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Իրաստութեան դիւան

Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան
Տեղեմար էֆէնտի Էքսէրճեան
Հօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Նախաձեռնութեան դիւան

Տիգրան էֆէնտի Եուսուֆեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Խթիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄՄ

Ն Ի Ս Տ Ժ Բ.


31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

ՆՈՒՍԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան (» »)

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն ԵՐԵՎԱՆԻ ԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒԱՆՔ	ՄԻՍՐԱԿԱՆՔ (Ա. Վիճակ)	47 Յ. Շիշմանեան Տօրթօր Բ Գ
Ա. Վիճակ	Գումգաբու, Կետիկ փաշա Եւ. Գումգաբուի դուրս	Իսկիւտար Ս. Կարապետ
1 Կարապետ Եպ. Սերոբեան Բ 2	21 Գրիգոր Պէրպէրեան Բ 2	49 Միհրան Պահճէգափուլ Բ 2
2 Սիմէօն Եպ. Սէֆէրեան Բ 2	22 Գէորգ Ստիմարաճեան Բ 2	50 Պօղոս Թորգոմեան Բ 3
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ 4	23 Խաչիկ Մանկասարեան Բ 11	51 Նիկողոս Ալաճաճեան Բ
4 Կարապետ Ք. Սէթեան Բ	24 Կարապետ Աղարձաճեան Բ	52 Տրդատ Փափաղեան Բ 4
Բ. Վիճակ	25 Համբարձում Մազպուլեան Բ 6	(Գ. Վիճակ)
5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան	26 Մինաս Գափաճաճեան	Գասըմ բաշա
6 Պօղոս Վ. Խօլտամեան	27	53 Գասպար Զէրաղ Բ 3
7 Հովհաննէս Ք. Մկրեան	28 Սարգիս Աղարէկեան Բ 4	Բերա
8 Գրիգոր » Աճէմեան Բ	29 Սահակ Ապրօ Բ 4	54 Արիկ Ունճեան Բ 4
Գ. Վիճակ	30 Սենեքերիմ Մանուկեան Բ 11	55 Գրիգոր Սէլիմիճեան Բ 4
9 Յակոբ » Ա. Փափաղեան Բ 2	31 Բարթող Քիւրքճիպաշեան Բ 4	56 Գրիգոր Օտեան Բ 4
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ 10	32 Ատովմ Տէրոյէնց Բ 12	57 Սէրվիլէն Բ 12
11 Խորէն » Փէհլիվանեան 12	33 Գէորգ Ապտուլահեան	58 Ռափայէլեան Տօրթօր Բ 12
12	34 Յ. Մէրեքմ-Գուլի	59 Միքայէլ Մօմճեան
Գ. Վիճակ	35 Աւետիս Կիրտաղեան Բ 12	60 Կարապետ Քաղաղեան Բ 12
13 Ներսէս Վ. Ասլանեան Բ 12	36	61
14 Սուքիաս Ք. Ստեփանեան Բ 10	37	62
15 Վրթանէս » Պալեան Բ 12	(Բ. Վիճակ)	Միջագիւղ
16	Պէլիկաշ	63 Յակոբ Նորատուկեան
Ե. Վիճակ	38 Անդրանիկ Կրճիկեան Բ 3	64 Տիգրան Եուսուֆեան
17 Խորէն Արք. Նար Պէլ Բ 4	39 Ալիքսան Խորասանճեան Բ 12	65 Մկրտիչ Գաղանճեան
18 Հովհաննէս Վ. Փափաղեան	40 Բարսեղ Հալաճեան	66 Նշան Օտեան Բ 6
19 Գարեգին » Թաթարեան	Եեքիզաբու	67
20	41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան	Պէլգօգ Եւ Ղալափա
Բ Բացակայութիւն առաջին :	42 Սեպուհ Մազաուտեան Բ 12	68 Միքայէլ Մամիկոնեան
Բ 2 Բացակայութիւն երկրորդ :	43 Մարուգէ Յրէնկեան Բ 2	(Գ. Վիճակ)
Բ 4 Բացկ. բանաւոր սլաւոճառաւ :	44 Պօղոս Էքսէրճեան	Քուրկուճուր Եւ Իճատիէ
	Իսկիւտար Ս. Խաչ	69 Հովհաննէս Էսաեան Բ 12
	45 Սիմէօն Յէլիկեան Բ 2	70 Ստեփան Պէլիկեան Բ 4
	46 Ստեփ Ասլանեան, հրաժարեալ	



Գատըգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապաղեան Բ 8		421 Ստեփան ֆախաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 11	Կարին	Տիվրիկ
Նարլըգաբու.	101 Սիմոն Մադուտեան Բ 5	422 Նշան Գարազաշ
73 Յակոբ Եջմէնիճեան	Քեօբանեա	Զէյրուց Եւ Մարաշ
Եհնիմանալիկ Սամարիոյ	102	423
74 Պօղոս Մկրտիչեան Բ 12	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգալիու.	103 Վիչէն Ապտուլլահ	424 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 12
75 Յովհաննէս Մարգարեան Բ	Նիկովիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	425 Մելքօն Իսկէնտէրեան Բ 12
Աստուածածին	Ակն	Տիգրանակէրտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Աւետիս Պարոնեան Բ 4	426 Միհրան Զօպանեան
Գուրուբէշմէ	Ղարահիսար	Վան
77 Ասափա Իկրտպաշեան Բ	106	427
Հիսար Եւ Պօյաճի գիւղ	Արաբկիր	Աղբամար
78 Յովհաննէս Արշակունի	107 Կարապետ Խաչիկեան Բ	428
Նոր գիւղ Եւ Սթեփիա	Բաղէշ	Հայեպ Եւ Այնթապ
9 Ղազար Հովուեան	108	429
Պալատ	Պրուսա	Սեբաստիա
80 Յովհաննէս Կրճիկեան Բ 9	109 Քրիստոստուր Ղազարոսեան	430 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Տելեմաք Էքսէրճեան	Եւղոկիա	Ռուսճուգ
82	Ամասիա	431
Քարակեօմքիւկ	111 Համբարձում Ալաճաճեան]	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ 4	Բալու.	432 Արրահամ Յ. Այվաղեան
84	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ 10	Զմշկածագ
(Ե. Վիճակ)	Եղեսիա	433 Համբարձում Սարժէշիճեան.
Սամարիա	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
85 Ալիքսան Ալիբեան	114	434
86 Եղիազար Մէլիքեան	115	435
87 Մինաս Ճաֆճաֆեան Բ 12	Հանքն	Սդերդ
88 Նազարէթ Շահապաղեան	Երզնկա	436 Մատթէոս Ալէքսանեան Բ 2
89 Յարութիւն Թիւրեան Բ 4	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ 2	Եօզղատ
90 Յակոբ Արշակ	Թէրիքտաղ	437 Լօղօֆէթ Պալեօղեան Բ 4
91 Սեպուհ Թիւրապեան	117 Տիգրան Գ. Սինանեան	Մալաթիա
92	Կեսարիա	438 Գէորգ Վարդանեան
93	118 Գէորգ Գըլճճեան	Իզմիր
64	Խասգիւղ	439 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 3	119	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէլիկեան Բ 2	120	440 Արրահամ Մուրատեան Բ
97 Սարգիս Արրահամեան Բ 12		
98		
99 Սարգիս Քալուքճեան Բ 12		
100 Աթանազիոն Արապեան Բ		

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Ս. Հրաժարում Մայր դիւանի անդամոց և ընտրութիւն .
 Բ. Խնդիր տեղափոխութեան ժողովարանի և բացակայութեան Երեսփո-
 խանաց. — Տեղեկագիր Յանձնախմբին :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԲ

Ամենասուտիւ Սրբազան Պատրիարքն անձ-
 նական տկարութեան պատճառաւ ստիպուած
 լինելով բացակայ մնալ ժողովէն, ընդ առ-
 ժամեայ նախազանգութեամբ Գեր. Տ. Մատ-
 թէոս Կալիսիպոսի Իզմիրեան և Ատենապե-
 տութեամբ Յ. Մէրեթի—Գուլի Էֆէնտիի՝ Ատ-
 եանը բացուեցաւ ժամը 8 ին, ի ներկայութեան
 23 երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ 38 ի
 յանդեցաւ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՃ. — Երես 166. Բ. սիւ-
 նակ. « Այս համարատուութենէն դուրս կը
 մնար այն կէտը թէ ինչ պատճառներով Տիգ-
 րանակէրտի մէջ բարենորոգմանց խնդիրն ան-
 յաջողութեան մատուցեցաւ » . պիտի ըլլայ
 « Այս համարատուութենէն դուրս կը մնայ
 Պօյաճեան Էֆէնտիի պաշտօնին այն մասը՝ որ
 բարենորոգմանց Յանձնախմբին պաշտօնէ դա-
 դարմանէն յետոյ տեղի ունեցած է » : Այս
 կէտն ալ ևն :

Երես 175. Բ. սիւնակ. Շահապաղ Էֆէն-
 տի մէկ խօսքը կայ թէ « Արժէք չ'ունի այդ բա-
 ուը և նոյն խկ գոյն կը յարգենք ըսողները
 շատ երեւելի անձեր փախուկ գործերու մէջ
 ամբաստանած են հոս այս ժողովին առջեւ ան-
 վայել կերպով և ժողովը պարտաւորած են
 Գատական յանձնախումբեր դնելու » : Ինչպէս
 եղեր է որ չեմ լսեր այդ անվայել կերպով
 բառը և անարատասանի թողեր եմ. նոյն խկ
 Ատենապետն ալ կերեւի որ չէ կրցեր ըմբռնել
 այդ կէտն որ կանոնական սահմանումն ի գործ
 չէ դրեր. քանզի ինչպէս կըլլայ որ անվայել կեր-
 պով եղած ամբաստանութեան մը համար ժողո-
 վը պարտաւորի Գատական Յանձնախումբ դնել :

1 .
 Վաւերացում նախորդ Ը. նիստի ատենա-
 գրութեան .

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ
 Ը. նիստի Ատենագրութիւնը թէև նախըն-
 թաց նիստին սրուած, բաց վաւերացումն
 այս նիստին մնացած է, հրաւիրեց երեսփո-
 խաններն որ անոր վրայ դիտողութիւն եթէ
 ունին՝ ընեն :

Երես 170. Ա. սիւնակ. « Վարչութիւնն ոչ թէ Սպիտակ տետր պիտի հրատարակէ երբ արժան դատի » , պիտի ըլլայ՝ « Վարչութիւնն ոչ միայն Սպիտակ տետր պիտի հրատարակէ եւայլն » :

Նոյն երես , նոյն սիւնակ . « Հարցում մ'ուզղէ Վարչութեան » . պիտի ըլլայ՝ « Հարցում ուզղէ Վարչութեան զլիսին՝ Ս. Պատրիարք Հօր՝ ըստ ներքին կանոնագրի » :

Աւրիշ ղիտողութիւն տեղի չունենալով , Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ Ը. նիտի ստենագրութիւնն և ժողովը միաձայն եղած ղիտողութեամբ հանդերձ ԸՆԳՈՒՆԵ-1, ՈՎ, ղայն կը վաւերացնէ :

2 .

Հրաժարական

Ատենապետ էֆէնտին ծանուցանելով ժողովին թէ Ասրանեան Ստեփան փաշայէն հրաժարագիր մ'եկած է , կը ներկայէ նորա բովանդակութիւնն միայն , որ է .

Ստեփան փաշա Ասրանեան իր բնակութիւնը Պօլսէն փոխադրելու պարտաւորեալ ըլլալը յայտնելով , կը հրաժարի երեսփոխանութենէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ստեփան փաշայի հրաժարականը պիտի ընդունուի բնականաբար , երբ տեղափոխութիւն կ'ընէ և կը մեկնի Պօլսէն : Սակայն Ստեփան փաշայն անձերէն մէկն է , որ իր թէ՛ վարչական և թէ՛ երեսփոխանական և այլ ազգային պաշտօններովն բազում օգտակար ծառայութիւններ մատուցած է Ազգին , և և վերջինս ատեններս նորի շարունակ Ատենապետութիւն ըրած է այս ժողովին : Ըստ իմ կարծեաց արժան է որ շնորհակալութեան քուէով մը կ'ընենք այս հրաժարականը , և ղիւանին յանձնարարենք որ ժողովիս շնորհակալութիւնը հաղորդէ նորին փեսմութեան :

ՁԱՅՆԵՐ. — կը կրկնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չկայ թէ՛ ղիւանը ցաւօք արտի կը ներկայէ այս հրաժարականը ժողովիդ : Ինչպէս Փափաղեան էֆէնտի յայտնեց , Ստեփան փաշա բազում կարեւոր ծառայութիւններ մատուցած է ազգին , երկար տարիներէ ի վեր . և այս ազգային ժողովին մէջ լաւ ղնահատուած են նորա արժանիքն ու ձեռնհասութիւնը , թէ՛ իրր երեսփոխան և թէ՛ իրր Ատենապետ :

Արդէն Փափաղեան էֆէնտի առաջարկը կրկնողներ ունեցաւ . ղիւանս ալ Ս. փաշայի հրաժարականը քուէի ենթարկելէ առաջ , մեծաւ ուրախութեամբ Ձեր շնորհակալութեան քուէն կը խնդրէ՝ Ստեփան փաշային այս ժողովիս մէջ ամենայն յաջողակութեամբ վարած պաշտօններովն Ազգին մատուցած ծառայութեանցն համար :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտի հրաւիրանաց վրայ , երեսփոխանք միահամուռ շնորհակալութեան քուէ կուտան յոտնկայս , Ստեփան փաշային՝ առ Ազգն և առ Ազգային ժողովն մատուցած ծառայութեանցն համար : Եւ ղիւանը կ'ըստանձնէ հաղորդել նորին փեսմութեան ժողովոյ սոյն հանդիսաւոր քուէն :

Յետոյ Ատենապետ էֆէնտի ժողովոյ ըրէին կ'ենթարկէ Ստեփան փաշայի հրաժարականն յԱզգային երեսփոխանութենէ :

Ժողովը՝ նկատելով որ Ս. փաշա իր բնակութիւնը փոխադրած է Պօլսէն , միաձայն ԿԸՆԳՈՒՆԵԻ նորա հրաժարականն :

3 .

Պաշտօնագիր
Եկեղեցական վիճակային ժողովոյ
Ատենապետ էֆէնտին ժողովին կը ներ-

կայէ և կ'ընթեռնու յետագայ պաշտօնագիրն , որ Եկեղեցական վիճակային ժողովոյ կողմէն եկած էր , և Կրօնային ատենին համար եռապատիկ ընտրելեաց ցանկը կը ներկայացնէր :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգային Ընդհանուր Ժողովոյ .

Ըստ հրաւիրանաց Ամենապատիւ Սրբազնութեան Ձերոյ այսօր՝ 22 հոկտ. 1880 գումարեցաւ Եկեղեցական վիճակային ժողովն ի պատրաստութիւն եռապատիկ ցանկին Կրօնային ատենի հինգ անդամոց :

Վիճակային ժողովոյ անդամ հրաւիրեալ 38 եկեղեցականներէն 19ը միայն ներկայ գտնուեցան , և ըստ օրինի ընտրութեան քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնը կատարուելով արդիւնքը զցուց որ թէեւ 38 անձ քուէ ըստացած է այլ սակայն տասներեքը միայն քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուած են , որ են :

	Քուէ
1. Գարեգին վարդաթաթարեան	17
2. Կարապետ եպիսկ. Սերովբեան	16
3. Մատթէոս » Իզմիրլեան	16
4. Սուքիաս Քհնայ. Ստեփանեան	15
5. Գրիգոր եպիսկ. Տ. Պօղոսեան	14
6. Յովհաննէս վրդապետ. Փափաղեան	14
7. Յակոբ » Ա. Փափաղեան	14
8. Արիստակէս քհնայ. Մամբրէեան	14
9. Խորէն » Փէհլիվանեան	14
10. Յովհաննէս » Հինքերպեան	13
11. Ներսէս վրդապետ. Արսլանեան	12
12. Տ. Սահակ քհնայ. Տ. Սարգսեան	12
13. Կարապետ վրդապետ Բղրատունի	11

Եւ օրովհետեւ ընտրելեաց ցանկն ամբողջացնելու համար երկու անձ կը պակսէր , ուստի առաւելագոյն քուէ ըստացող չորս եկեղեցականաց վրայ՝ որ են

	Քուէ
1. Պօղոս վրդապետ. Խօլտամեան	9
2. Եղիշէ » Այվաղեան	9
3. Խչտուր. քհնայ. Տ. Գարրիէլեան	9
4. Սիմէօն եպիսկ. Սէֆէրեան	6

Կրկին քուէարկութիւն ըլլալով ըստ առաջնոյն գործողութիւնը կատարուեցաւ , որոյ արդիւնքն եղաւ հետեւեալը .

	Քուէ
1. Սիմէօն եպիսկ. Սէֆէրեան	12
2. Եղիշէ վրդապետ. Այվաղեան	11

Հետեւապէս Կրօնային Ատենի անդամոց ընտրութեան եռապատիկ ընտրելեաց ցուցակն ամբողջացաւ , որ է .

1. Գրիգոր եպիսկ. Տ. Պօղոսեան
2. Սիմէան » Սէֆէրեան
3. Կարապետ » Սերովբեան
4. Մատթէոս » Իզմիրլեան
5. Գարեգին վրդապետ. Թաթարեան
6. Յովհաննէս » Փափաղեան
7. Ներսէս » Արսլանեան
8. Կարապետ » Բագրատունի
9. Յակոբ » Ա. Փափաղեան
10. Եղիշէ » Այվաղեան
11. Յովհաննէս քհնայ. Հինքերպետ.
12. Սահակ » Տ. Սարգսեան
13. Արիստակէս » Մամբրէեան
14. Սուքիաս » Ստեփանեան
15. Խորէն » Փէհլիվանեան ,

Եկեղեցական վիճակային ժողովն իր այս գործողութեան տեղեկագիրը

մատուցանելով Ձեր բարձր Սրբազնութեան .

Մնամք

Ի Դիմաց Եկեղ. Վճկային. Ժողոջ.

Ատենադպիր Ատենապետ

Խ. Քն. Փեհիվանեան Մ. Եպս. Իզմիրլեան

Ի 22 հոկտ. 1880

Ի Պատրիարքարան Հայոց

Ի Կ. Պոլիս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս պաշտօնագիրը Ս. Պատրիարք Հօր մատուցուած ըստով, Նորին Սրբազնութենէն ժողովոյս յղուած է .

Վարչական կազմակերպութեան 37 բոլորուածը կըսէ .

« Կրօնային եւ Քաղաքային ատենաներն « Աղգային ժողովէն կընտրուին, Ատենապետաց « զիւանին ներկայած սրբազրելի ցանկերուն « վրայ .

« Կրօնային ատենին համար Ատենապետաց « տաց զիւանին կողմէ ներկայելի ցանկը քաղ- « եալ պիտի լինի Եկեղեցական Վիճակային ժողովէն պատրաստուած եռապատիկ ցանկին մէջէն .

Հետեւաբար այս պաշտօնագիրը կը յը- ղենք Ատենապետաց զիւանին, եւ յաջորդ նիստին օրակարգը կանցնենք, « ընտրութիւն Կրօնային եւ Քաղաքային ատենից» .

4.

Միջադեպ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս խնդիրն Ատենապետաց զիւանին պիտի երթայ . բայց չ'զիտեմ նախ թէ Ատենապետաց զիւանն ամբողջացած է . երկրորդ՝ մինչեւ հիմա խել մը խնդիրներ յանձներ ենք զիւանաց, որոց պատասխանները տակաւին չեկան . այս աղէկ վիճակ չէ . ո՞ր է, ըստ կանոնի ցուցակ պի-

տի կախուէր ժողովարանին մէջ ծանուցանող թէ ինչ խնդիրներ յղուած են եւ որո՞ւն պատասխանն եկած է : Նախ՝ այս ցուցակը պէտք է կախուի . երկրորդ՝ որ զիւանն որ իրեն յղուած խնդրոյն պատասխանը յայտարարէ, Ատենապետը պէտք է պատասխանատու բռնել, եւ երրորդ՝ այն զիւաններն՝ որոց գործ յանձնուած է, նիստ եղած օրը գոնէ մէկ ժամ առաջ գալով պէտք է գործեն, եւ ասոր համար մէկ երկու սենեակ յատկացնել հարկ է : Այս 3 կէտերը կը ներկայեմ ժողովին ուշադրութեան : Ասոնցմէ դատ խնդիրներ կան, որ Վարչութեան կը յանձնուին ի գործադրութիւն ըսելով . սակայն այդ խնդիրները կը գործադրուին թէ ոչ, չգիտենք . պէտք է որ Ատենապետը էֆէնտին այս մասին տեղեկութիւն ըստանայ եւ ըստ ներքին Կանոնադրութեան ցուցակաւ մը հաղորդէ ժողովին : Իսկ եթէ ներկայ վիճակը շարունակէ, շատ դժբաղդ պիտի լինիմք . ուստի պէտք է որ գործնական վիճակի մը մէջ մտնենք :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քանի մը նիստ առաջ երեսփոխանաց ոմանց կողմէ թաղային մատակարարութեան նկատմամբ ներկայացեալ առաջարկութիւն մը Ատենապետաց զիւանին յղուեցաւ ամսօրեայ նշանաժամաւ ծրագիր բերելու համար, պայմանաժամը լրացաւ, սակայն ծրագրը ցարդ չեբեցաւ : Ասկէց զատ հարցուցած էի թէ Վանայ երեսփոխանական ընտրութեան տեղեկագիրն ինչու չէ եկած ժողովին, այն ատեն Դիւանը պատասխանեց թէ ինքը տեղեկութիւն չունէր եւ սակայն խոստացաւ ստուգել այս կէտը : Արդ կը փափաքիմ գիտնալ թէ անկէ ի վեր Դիւանն ինչ գործողութիւն կատարած է այս մասին :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Փափաղեան էֆէնտի ըսածներուն համաձայն էմ . զիւանաց ամբողջացումն ամենահարկաւոր է, զի առանց ասոր անկարելի է որ յանձնուած գործոց պատասխանը պահանջեմք : Բայց մեք տակաւին Մայր զիւանը չկրցինք ամբողջացնել, որ պաշտօն ունի հսկել միւս զիւանաց վրայ . ուս-

տի այսօր ամէն բանէ առաջ պէտք է Մայր զիւանն ամբողջացնել :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Մեք ամեն պարագայի մէջ կուզենք խստութիւն բանեցնել . իրաւ է թէ այն անձն՝ որ պաշտօն մը կըստանանք պարտաւոր է ճշդիւ կատարել զայն . սակայն միթէ անոնք՝ որ խստութիւն բանեցնել կուզեն, ճշդիւ կատարած են իրենց յանձնուած գործերը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Այս խօսքերուն դէմ կը բողոքեմ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաղաչեմ, մի՛ ջընդմիջէք . թոյլ տուք որ իւրաքանչիւր երեսփոխան իր կարծիքն աղատօրէն յայտնէ . եթէ Դիւանը պատշաճից հակառակ եւ զիտողութեան արժանի պարագայ մը նկատէ, իւր պարտքը կատարելու չվարանիր :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Շընորհակալ եմ Դիւանէն : Հիմա մէկ երկու առաջարկութիւնք տեղի ունեցան . նախ՝ ըսուեցաւ թէ իւրաքանչիւր զիւանի ատենապետը պատասխանատու բռնուի եւ երկրորդ՝ յատկապէս սենեակներ պատրաստուին զիւաններուն համար, որպէս զի իրենց յանձնուած խնդիրները ուսումնասիրելու համար առանձին աեղեր ունենան : Բայց պէտք է խորհիլ որ եթէ գործ եւ պաշտօն ստանձնողները մանաւանդ մեր ազգին մէջ, ուր բարոյական է ազգային ծառայութիւնը, դժուարութեանց հանդիպին եւ այս աստիճան խստութիւն տեսնեն, վախճանն ինչ կըլլայ . ո՛չ ուրիշ բան, այլ այն՝ ինչ որ կը տեսնեմք հիմա : Երեք չորս ամիս է յորմէ հետէ ժողովը բացուած է . սակայն Մայր զիւանն չկրցինք դեռ կազմել . եւ թէեւ Ատենապետներ եւ Ատենադպիրներ ընտրեցինք, բայց մեծ մասը հրաժարեցաւ . ինչո՞ւ . վասն զի խստութեամբ վարուեցանք : Այս խստութիւնը ասկէ առաջ ալ բանեցուցինք պաշտօնէից մասին եւ մինչեւ իսկ դատ պահանջեցինք . բայց արդիւնք մը չունեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եկեղեցական Վիճակային ժողովի պաշտօնագրին յղման առթիւ միջադէպ մը բացուեցաւ եւ փափաղեան էֆէնտիէն սկսեալ խօսք առնողներն այնպիսի զիտողութիւններ ըրին զիւանաց յանձնուած խնդրոց յապաղման վրայ, որոց ամենն ալ իրենց տեսակէտներովն իրաւացի էին : Բայց ինչպէս Գրխոստատուր էֆէնտի զխոսեց, քանի որ տակաւին Մայր զիւանը կազմուած չէ, դժուար կըլլայ ներկայ վիճակէն աղաթիլ : Վասն զի ո՞վ է որ պիտի հսկէ ժողովին որոշմանց գործադրութեան եւ զիւաններուն յանձնարարեալ խնդրոց նախաքննութեան վրայ : Իրաւունք չէ միայն Ատենադպրէն պահանջել այդ ամենը . Ատենապետն ալ իւր գերն ունի, զոր պէտք է ժամանակին կատարէ : Առ այժմ տեղի ունեցած թերութեանց եւ յապաղմանց գլխաւոր պատճառն ոչ այլ ինչ է, այլ մեծաւ մասամբ Մայր զիւանին ցարդ կատարելապէս չկազմուելը : Ասկէ կը ծագի Վանայ երեսփոխանի ընտրութեան յայտագրին յապաղումը . ասկէ կը ծագի գլխաւորապէս՝ յանձնարարեալ խնդրոց ցարդ անպատասխանի մնալը . ասկէ հետեւեցան նաեւ այն հակընդէմ կարծիքներն ու զիտողութիւններն, որք յայտնուեցան այժմ, եւ լաւագոյն էր թերեւս որ այնքան հաստատական ձեւով չյայտնուէին . զի փոխադարձաբար ծայրայեղ թուեցան իրարու, մինչդեռ ամենն ալ ազգին օգուտն ունէին իրենց տեսակէտ : Վերջապէս Մայր զիւանին ամբողջացմամբ այս ամենը կրնան կարգաւորիլ, եւ ըստ որում այդ խնդիրն Օրակարգին մէջ առաջին տեղը կը բռնէ եւ կարծեմ թէ այսօր կրնայ վերջանալ, լաւ կըլլայ որ այս միջադէպը գոցենք եւ Օրակարգը ձեռք առնունք շուտով :

ՉՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Քիչ մը առաջ Փափաղեան էֆէնտի զանգատեցաւ թէ զիւաններն իրենց յանձնուած խնդրոց տեղեկագրերը չեն բերեր . ահաւասիկ մեր Յարաբերութեան զիւանին երկու օր տա՞յլ հոկտեմբեր 28 թուականաւ զիր մ'եկած է . բայց մեր Ատենապետը Գարեգին էֆէնտի Մելիքեան Վար-

չական խորհրդական ընտրուելով, այսօր դրա-
դած է, եւ այս պատճառաւ տնկարող եղած
ենք մեզի յանձնուած գրոյն պատասխանը
պատրաստելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ձեռ ընդունիր
այն խօսքը թէ մեք խտտապահանջ ըլլալով
չատերը վշտացուցած եմք, եւ մասնաւորա-
պէս Մայր Դիւանի անդամոց հրաժարման
պատճառ եղած ենք :

Սէրվիլէն էֆէնտի կանխապէս իմաց տը-
ւեր է, կըսեն, որ եթէ Մայր Դիւանի անդամ
ընտրեն, չպիտի կրնայ ընդունիլ, նոյնը յայտ-
ներ է նաեւ Մամիկոնեան էֆէնտի, Պէրպէր-
եան էֆէնտի ալ նախամեծար համարեր է
սլաշտոն չընդունիլ եւ իբր երեսփոխան խօ-
սելու աղատ մնալ : Ուստի քանի որ ասոնք
ոչ առ վշտի կը հրաժարին, ի՞նչու համար այդ
տեսակ խօսքեր կուղղուին մեզ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շահպաղ էֆէնտի
ըսաւ միանգամայն թէ՛ ժամանակ եղաւ որ
պաշտօնեաներ դատի հրաւիրեցինք, բայց ար-
դիւնք մը չունեցաւ : Այո՛, կը յիշէք որ եր-
բեմն զեղծմանց դէմ բողոքեցինք եւ դատ
պահանջեցինք : Շահպաղ էֆէնտի կարծեմ
այս երկրորդ անգամ է որ կը յիշէ այդ դա-
տը, բայց ինքն իբրեւ երեսփոխան չհամար-
ձակիր պաշտօնապէս հարցնել թէ ինչ ելք ու-
նեցաւ այդ դատը : Մի եւ նոյն բանը պատա-
հեղաւ նաեւ երբ Տէր Մատթէոս Սրբազան
նախընթաց նիստերէն մէկուն մէջ ըսաւ թէ
Դատաստանական խորհրդոյ մէջ զեղծումներ
կը լինին : ոչ ոք կրցաւ, նոյն իսկ Գատաս-
տանական խորհրդոյ անդամ եւ միանգամայն
երեսփոխան եղող անձինք չկրցան հարցնել
թէ ի՞նչ են այդ զեղծումներն եւ թէ իրենց
այդպիսի բան մը պատահած է : Ահա այս տե-
սակ զեղծմանց մասին խուզարկութիւն ընող-
ներն խտտապահանջ կանուանէ Շահպաղ է-
ֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսպիսի խնդիր մը
երեւան կը հանէք, որ ժողովը չկրնար անսվ

դրաղիլ : Եթէ Շահպաղ էֆէնտի իւր ըրած
ակնարկութեանց մէջ դիտաւորութիւն ունե-
նար Փափագեան էֆէնտիի դէմ ուղղակի բան
մ'ըսելու, պէտք էր որ իբր զատ խնդիր ներ-
կայացնէր դոյն : առանց ասոր իրարու դէմ
ենթադրական ակնարկութիւններու համար
ժողովը չկրնար դրաղիլ եւ անստոյգ վէճերով
ժամավաճառ լինիլ :

Ազդարարութեանս նպատակն այն է որ
այս նիւթին վրայ այլ եւս ոչ մէկուն խօսք
պիտի տամ. ուստի միջադէպը գոցուած կը
հրատարակեմ :

5.

Պաշտօնագիր Սրբազան Պատրիարք Հօր.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին չանցած
նոր պաշտօնագիր մ'ալ կը ներկայացնեմ ժո-
ղովին, որ Սրբազան Պատրիարքին կողմէ ե-
կած է :

Եւ Ատենապետ էֆէնտին կարգաց հե-
տեւեալը .

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային Ժողովոյ,

Ըստ տրամադրութեան 9 ըդ յօդ-
ուածոյ Ազգային Վարչութեան կազմա-
կերպութեան օրինաց, կը փութամ Ազ-
գային Ժողովոյ ներկայացնել նորընտիր
Վարչական Խորհրդոյ անդամոց անուն-
ներն որք են,

- Գեր. Տ. Մատթէոս Լալիս. Իզմիրլեան
- կրօնական գործոց
- Մեծ. Տիգրան էֆէնտի Եռսուֆեան
- Ներքին գործոց
- » Միքայել » Մօմճեան
- Յարարերական գործոց

- Մեծ. Միքայել էֆէնտի Մամիկոնեան
- կրթական գործոց
- » Սերովլէ » Ազնաւորեան
- Գատական գործոց
- » Գարեգին » Մէլիքեան
- Տնտեսական գործոց :

Նորընտիր խորհրդականք ըստ մեր
հրաւիրանաց իրենց յանձնուած պաշտօնն
ազգասիրաբար ստանձնած ըլլալին հա-
ղորդելով ի գիտութիւն Ժողովոյդ, և բո-
լոր Ազգային վարչական մարմնոց կարո-
ղութիւն մաղթելով,

Մնամ աղօթարար
31 Հոկտեմբեր 1880 Պատրիարք Կ. Պօլսոյ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ ժողո-
վին քուէարկած վարչական կազմակերպու-
թեան նոր օրինաց համեմատ Ս. Պատրիարքն
ընտրած է իւր վեց խորհրդականներն, որք
Վարչական խորհուրդը կը կազմեն, եւ զորս
Ս. Պատրիարքը կը ներկայացնէ Ազգային ժո-
ղովին :

Առ այժմ կը շնորհաւորենք Վարչական
նորընտիր խորհրդականներն, եւ կար աւ զօ-
րութիւն կը մաղթեմք իրենց :

Իսկ արդ Վարչական մեքենայն ըստ նոր
կազմակերպութեան ամբողջացնելու համար
կրօնային եւ Քաղաքային ատենից ընտրու-
թեան պէտք ունիմք : Պահ մ'առաջ եկեղե-
ցական Վիճակային ժողովին տեղեկագիրը
կարգացուեցաւ եւ Ատենապետաց զիւանին
յղուեցաւ որ կրօնային ատենի ընտրելեաց
ցանկը բերէ յառաջիկայ նիստին : Նմանօրինակ
ցանկ մ'ալ Քաղաքային ատենի ընտրելեաց
համար պիտի բերէ անշուշտ. եւ յաջորդ նիս-
տին այս ընտրութեանց խնդիրը հաւանակա-
նաբար պիտի վերջանայ : Յուսալի է ուրեմն
որ Կեդրոնական Վարչութեան բոլոր ձեռն-
բը պիտի ամբողջանան անյապաղ, եւ այսնու-
րոգ գրութեամբ կազմնալ Ազգային Վարչու-

թիւնն ազգին արդի պիտոյից համապատաս-
խանող արդիւնաւոր վիճակ մը պիտի ունե-
նայ :

ՕՐԱԿԱՐԳ



Հրաժարում Մայր դիւանի անդամոց Ե.
Յնարուքիւն.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք, նու-
խընթաց նիստին մէջ այն ինչ երեսփոխանոց
բացակայութեան խնդրոյն նկատմամբ՝ Յանձ-
նախմբին տեղեկագրին եզրակացութեան կրդ
կէտով կրթաղէինք, որոշող ձայնից միաբանու-
թիւն չդոյանալուն պատճառաւ, խնդիրը չը
կրցաւ լուծուիլ եւ այսօրուան նիստին թող-
ուեցաւ : Բայց անոր շարունակութիւնը սրահ
մը յետոյ տեղի պիտի ունենայ, վասն զի այս-
օրուան օրակարգին առաջին խնդիրը՝ Մայր
դիւանի հրաժարեալ անդամոց ընտրութիւնն
է, եւ զայն ձեռք պիտի ստանուիմք նախադէս :
Ըստ նախորդ նիստի որոշման :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նախ սա հաս-
կընանք թէ ժողովն Իսկական մեծամասնու-
թիւն ունի՞. եթէ չունի՞ 2/3 ձայնից միաբա-
նութիւն գտնելն թերեւս անկարելի ըլլայ :
Միթէ լա՞ւ չըլլար որ խնդիր մ'սկսեր էինք
արդէն, զայն շարունակենք եւ ետքը գտնիք
ընտրութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իսկական մեծամաս-
նութեան օրահանջած թիւը թէեւ չունիմք,
բայց 2/3 ձայնից միաբանութիւնն անկարելի
համարելու պատճառ ալ չուծիմք :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը զարմանամ
Քրիստոստուր էֆէնտիի դիտողութեան վրայ,

որ մինչդեռ Մայր դիւանի ամբողջացման կա-
րեւորութիւնը պնդելով քան զամեն խնդիր
նախադասել կուզէր, սրուն եւ ալ համարա-
ծիր զանուած էի, հիմայ ելեր զայն ետքի ձը-
զել կառաջարկէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հարկ չկայ դար-
մանալու . եւ կը ցուիմ ժողովին սա վիճակին
վրայ՝ որ պէտք եղած թիւն ունենալէ զուրկ
կը գտնուի :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ամբողջ երեսու-
խանայ գաղափարն ալ նոյն է . այսինքն ամ-
բողջացնել ժամ մ'առաջ Մայր դիւանի կազ-
մութիւնը : Իսկ Քրիստոսաւոր էֆէնտի կաս-
կածելով որ մի գուցէ 24 ձայնից միաբանու-
թիւն չը գոյանայ, կառաջարկէ պահ մ'ետք
ձգել ընտրութիւնը, որպէս զի թերեւս քանի
մը երեսփոխաններ եւս գալով՝ 24 ձայնից
միաբանութեան փորձը պարտաւր չերթայ :

Այս առաջարկը ճիշդ եւ գործնական ալ
է, ուստի ես ալ կը հասանայնիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ կըլլայ ինձ ժո-
ղովին ուշադրութեան ներկայացնել այն կանո-
նական յօդուածն, որ երբ այսպիսի ընտրու-
թեանց ատեն որոշող ձայնից միաբանութիւն
չգոյանայ, հետեւեալ նիստին որոշող մասին
ներկայութիւնը կը բաւէ :

Մեր այդ թիւէն շատ աւելի ունիմք այժմ.
ուրեմն կրնանք ձեռնարկել ընտրութեան :
Ուստի կը հրաւիրեմ զերեսփոխանս՝ որ Ա. Ա-
տենապետի ընտրութեան համար միանուն
քուէ պատրաստեն :

Քուէարկութիւնն սկսելով, քուէհամարի
համար քննիչ կը կարգուին ,

Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան	Սինանեան
Տիգրան էֆէնտի	Այվազեան
Աբրահամ	Գարազաշ
Նշան	

Քուէհամարը կատարուելով, յետագայ
արդիւնքը կարտադրէ .

Թիւ քուէարկուաց 38	
Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի	Քուէ 25
Սինան պէյ Մազաուա	» 12
Քրիստոսաւոր էֆ. Ղազարոսեան	» 1

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ շնորհակալ եմ
ժողովին այն մեծ արտաւոյն համար՝ զոր կընէ
ինձ, իրեն Ատենապետ ընտրելով : Քրիստաւոր
հանդերձ թէ կարի պատուարեր եւ հրատա-
րիչ է ինձ ընծայեալ պաշտօնն, անկեղծու-
թիւնը կը պարտաւորէ զիս խոտտովանիլ թէ
այդ պաշտօնին ընտրելին չեմ եւ : Վասն զի
նախ չեմ կարծեր որ պաշտօնին պահանջած
հանգամանքն ունենամ, եւ այդ մասին արժա-
նաւորութիւն ցոյց տուած ըլլամ : Եւ եթէ
ունենամ ալ, թողլով խել մը նկատուիներ եւ
պատճառներն՝ որք պաշտօնին ընդունելութիւ-
նը կը դժուարացնեն, միւս կողմէ իմ անձ-
նական ծանր դրազմունքս անյաղթելի արդելք
մ'է սոյն պաշտօնն արժանապէս կատարելու :
Ուստի կը խնդրեմ ժողովէն՝ որ շնորհ ընէ ու-
րիշ մ'ընտրելու իրեն Ատենապետ, եւ զիս
Դեր-Ատենապետի պաշտօնին մէջ թողու,
յորում կարենամ թերեւս թեթեւ ծառայու-
թիւն մը մատուցանել :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ժողովը կը ճանչ-
նայ զձեզ, եւ ձեր զբաղմունքը . սակայն ձեր
ազգասիրական եւանդն ալ քաջ գիտնալով,
փտտահութեամբ կառաջարկէ որ ձեր թանկա-
զին ժամանակէն մաս մը զոհէք այս փափուկ
պաշտօնին, մանաւանդ որ կազաչեմք ալ :

ԶԱՅՆԵՐ. — Այո, այո :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը նոյն խի իրեն
համար տղէկ կընէ եթէ իմ տեղն ուրիշ մը
ընտրէ Ատենապետ : Զի եւս չունիմ իմ վրայ
այն փտտահութիւնը թէ պիտի կրնամ արժա-
նապէս կատարել Ա. Ատենապետի պաշտօնը :
Եւ եթէ Դեր-Ատենապետի պաշտօնին մէջ յա-

ջորած եմ գոհ ընել զժողովն, եւ այս պատ-
ճառաւ Ատենապետ կընտրէք զիս, լուսադոյն
է որ զիս Դեր-Ատենապետ պահէք, եւ ալ երի
ձեռնհաս մէկն Ատենապետ ընտրելով, անկէց
ալ օղուա քաղէք :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ Ատենա-
պիր գտնուելով, պատիւ կը համարիմ Մէր-
եէմ-Գուլի էֆէնտի պէս փաթաղան անձի մը
չեա աշխատաւորի : Ուստի կը խնդրեմ որ շնորհ
ընէ ընդունիլ :

ԶԱՅՆԵՐ. — Կը ձայնակցինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում իմ բա-
ցատրութիւններս լռելէ ետեւ դարձեալ ժո-
ղովը կը պնդէ, չեմ կրնար բացարձակապէս
գիմադրել եւ ժողովը կամայ չը համակերպիլ
միայն կաղաչեմ որ անձեռնհասութեանս եւ
զանազան արգելիցս նկատմամբ ըրած անկեղծ
յայտարարութիւններս չը մոռցուին գոնէ :

Ժողովը կը ՎԱԻԵՐԷ քուէհամարին ար-
դիւնքը, եւ ըստ այնմ Ա. Ատենապետ կը ՀՈՒ-
ԶԱԿՈՒԻ Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրդ ընտրութեան
կարգը Բ. եւ Գ. Ատենապետներուն է . հա-
ձեցէք ուրեմն երկանուն քուէ պատրաստել :

Ատենապետ էֆէնտի հրաւիրանայ վրայ
քուէարկութեան ձեռնարկուելով, քուէհամա-
րը կը կատարուի եւ արդիւնքը կը լինի .

Թիւ քուէարկուաց 33	
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի քուէ 25	
Լօղոֆէթ » Պալեօղեան » 19	

Հետեւեալէս՝ քուէից տուուելութեան կար-
գաւ Բ. Ատենապետ կը ՆՏՐՈՒԻ՝ Առաքել էֆէն-
տի Ալթուն-Տիւրքի եւ Գ. Ատենապետ՝ Լօղո-
ֆէթ էֆէնտի Պալեօղեան :

Ժողովն ընդունելով կը ՎԱԻԵՐԷ այն ընտ-
րութիւններն, եւ Ատենապետ էֆէնտի կը
ՀՈՒԶԱԿԷ զանոնք :

Ընտրութեան կարգն Գ. Ատենապետին
գալով, եւ Ատենապետ էֆէնտին ժողովին ու-
շադրութեան ներկայելով որ ժամը 9 1/2 ան-
ցած է, կառաջարկէ եւ ժողովը կը ՆԳՈՒՆԵ
անցնիլ օրակարգի Բ. խնդրոյն, ետքի թողով
Գ. Ատենապետի ընտրութիւնը :

Խնդիր տեղափոխութեան Ե. բացակայու-
թեան երեսփոխանաց . — Տեղեկագիր
ՔՆԵԻՅ Յանձնախմբին .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս յիշեցուցի ի ըս-
կըզբան, նախորդ նիստին մէջ՝ Յանձնախմբի
տեղեկագրին եզրակացութեան Յրդ Յօդուա-
ծին վիճարանութիւնն աւարտելով, 4րդ Յօդ-
ուածին վրայ փափագեան էֆէնտի կողմէ ա-
ռաջարկեալ բարեփոխութիւնը քուէարկու-
եան ենթարկուած, սակայն 24 ձայնից միաբա-
նութիւն չգոյանալուն պատճառաւ անորոշ մը-
նացած էր : Այժմ նոյն բարեփոխութիւնը քը-
ւէի պիտի դնեմ :

Եւ Ատենապետ էֆէնտին կարգաւով
փափագեան էֆէնտի բարեփոխութիւնը որ
է . « Առանց օրինաւոր պատճառի երեք ան-
գամ շարունակ բացակայ եղող երեսփոխանին
անունը Դիւանը կը ծանուցանէ ժողովին, եւ
կոչնագրին մէջ ալ յատկապէս կը յիշեցնէ ի-
րեն՝ որ երրորդ բացակայութիւնն ունեցած է
արդէն եւ եթէ չորրորդ անգամ ալ բացակայ
մնայ, ըստ օրինի հրաժարեալ պիտի համար-
ուի » :

Քուէի կենթարկէ, եւ ժողովը միաձայն
ընդունելով զայն կը ՎԱԻԵՐԷ եւ կանցնի Յրդ
եւ վերջին Յօդուածին՝ որ է .

«Ճարդ բացակայից, յետ ընդունելութեան սոյն առաջարկութեանց գէթ առաջնոյն, ազդարարութիւն ուղղել եւ ծանուցանել եղած նոր տնօրէնութիւնընէ՛ր, յառաջ քան զայնս տեղի ունեցած բացակայութիւնըն գեղջեակ համարելով» :

S. ՄԱՏԹԷՍ ԵՊՈՍ. — Նախորդ նիստին առաջարկութիւն մ'ըրած էի բացակայ երեսփոխանաց համար թէ անմիջապէս պէտք է զանոնք հրաժարեալ համարիլ եւ անոնց տեղ նորերն ընտրել տալու անօրէնութիւն ընել :

Սակայն քանի որ մեր Յանձնախուճան անշուշտ հեռատեսութեամբ այնպէս նկատած է թէ թեքեւս բացակայք զան շարունակեն իրենց պաշտօնը, իմ առաջարկութիւնս ետ կը կոչեմ եւ կը համակերպիմ Յանձնախմբին առաջարկութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրեմն կը մնայ Յանձնախմբին առաջարկութիւնն, որոյ համեմատ մինչեւ ցարդ տեղի ունեցած բացակայութիւնք աւ ոչինչ պիտի զրուին, եւ այսօրուրնէ սկսեալ ի հաշիւ առնուելով, երրորդ անգամուն ժողովին պիտի ծանուցուի եւ իրենց ազդարարութիւն իսկ չորրորդին պիտի հրաժարեցուցուին :

Ուրիշ խօսք ուղող կայ այս մասին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ըստ առաջարկութեան Յանձնախմբին՝ այսօրուրնէ սկսեալ մինչեւ չորս նիստ պիտի շարունակենք ունենալ արդի վիճակը, եւ բազում նիստերէ ի վեր բացակայ մնացող երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնք ալ ըստ այնմ պիտի յետաձգին :

Ես չեմ կարծեր որ այս առաջարկութիւնըն ընդունելով աղէկ բան մ'ըրած լինինք. մինչեւ հիմա բացակայութեան գլխաւոր պատճառ ժողովին ի Գում-Գախու գումարին համարուած էր, բայց ահա ժողովն 11—12 նիստերէ ի վեր ի Ղալաթիա փոխադրուած է, եւ այդ բացակայ երեսփոխանք չերեցան մեր մէջ. այսքան նիստերու մէջ միանգամ եւ եթ պատահեցաւ որ 47 Իսկական մեծամասնութեան

թիւ ունեցանք, Ա. արչական կադմակերպութեան օրէնքը քուէարկեցինք՝ 24 ձայնով. երուսաղիմայ համար նոր կանոնադիր քուէարկեցինք դարձեալ 24 ձայնով. շատ խեղճ վիճակ է այս, պէտք է որ այս վիճակէն զմեզ ազատենք. ուստի կ'առաջարկեմ որ յաջորդ նիստին հրաժարուին այն բացակայ երեսփոխաններն կամ անձամբ զալ ժողովի կամ գրով ծանուցանել իրենց բացակայութեան պատճառը. եթէ այս երկուքն ալ չընեն, ինքնին հրաժարեալ համարուին :

S. ՄԱՏԹԷՍ ԵՊՈՍ. — Պահ մ'առաջ յետըս կոչեցի այն առաջարկութիւնն՝ զոր անցեալ նիստին ըրած էի. այժմ ֆախաղեան էֆէնտի նոյն առաջարկութիւնս է որ կընէ մինչդեռ անցեալ նիստին չէր ընդուներ զայն՝ երբ բացակայութեանց համար նոր օրէնք կը զնենք, անցելոյն մէջ չ'եկողներն ընդհանուր ներողութեան կ'արժանանան. կարելի չէ ըսել անոնց թէ վերջին անգամ կազարարութիւնը, եւն: Բան մը միայն կրնանք ընել. Տ—10 անգամ շարունակ չեկողներուն յաւելուած մը ընելով յիշեցնել միայն թէ այսքան ատենէ ի վեր չեն եկած: Ուստի կը պնդեմ առաջին առաջարկութեանս վրայ եւ միայն այն երեսփոխանաց որ 8—10 անգամներէ ի վեր չեն եկած, յետագրութեամբ մը յիշեցնել իրենց ունեցած բացակայութիւնք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Անցեալ նիստին ալ՝ երբ Մատթէոս Սրբազան կառաջարկէր անմիջապէս հրաժարեցնել բացակայ երեսփոխաններն, ես պատշաճից զէմ համարելով զայդ կըսէի թէ պէտք է միանգամ ծանուցանել չեկողներուն եւ վերջնական կերպով անոնց կաճքն իմանալէ ետեւ հրաժարեալ նկատել զանոնք: Ահա նոյն բանն է որ այսօր ալ կը կրկնեմ, եւ ինչո՞ւ համար. գլխաւորապէս ժողովին գոյութեան զէմ սոցաձնացող ինդիքը լուծելու համար: Եթէ Յանձնախմբին առաջարկած նոր օրինաց հետեւութք, մինչեւ 2 ամիս պիտի սպասեմք չեկողներուն կաճքն իմանալու համար եւ մինչեւ այն ատեն չպիտի

կրնամք հրաժարելոց տեղ նոր ընտրութեան հրահանգ զրկել պէտք եղած թաղերը. այսպէսով նոր ընտրութիւնք մինչեւ Ս. Մնեղեան օրերուն կերթան կը պատահին, եւ այդ պատճառաւ ալ աւելի կը յետաձգին: Ուստի այս դժուարութիւններէն ազատելու միակ միջոցն ըստ իս այս է. քաղաքավարութեամբ մը զրել եւ իմացնել թէ ըստ ներկայութեան տուումս ինքնապի անգամ բացակայութիւն ունեցած էք, եւ թէ՛ կերբեւի որ ըստ կանոնադրութեան ժողովին՝ ձեր երրորդ բացակայութեանէն ետեւ ինքզինքնիդ հրաժարեալ նկատելով ժողովին գալէ գադրած էք. բայց ժողովն զձեզ հրաժարեալ չնկատեր եւ կը փախաքի որ յաջորդ նիստին ներկայ գտնուիք. իսկ եթէ չպիտի կրնայք գալ, բանաւոր պատճառը գրով յայտնեցէք :

Սոյն քաղաքավարական ազդարարութեանէն ետեւ նորէն չեկողը կրնանք անմիջապէս երեսփոխանութենէ դադրած համարիլ եւ զինքըն ընտրող թաղին հրահանգ տալ որ անոր տեղ ուրիշ մ'ընտրէ: Այս պատիժն որ պիտի տնօրինենք՝ անոնց համար է որ եւ ոչ իսկ երկասող զիր մը ժողովին զրկելու եւ բանաւոր պատճառներն յայտնելու չեն զիջանիր :

ՇԱՀԱՋԱՆ ԵՅ. — Գիտէ սլատկառելի ժողովն որ ամեն Ազգային ժողով որ օրէնքագիր է, ընդհանուր կանոնաց համաձայն վարուելու պարտաւորութիւն ունի. ընդհանուր կանոն է որ երբ Թրէնդիր ժողովն նոր օրէնք մը կը հաստատէ, անցեալին համար դորձագրելի չէ այն, այլ ապագային համար: Ասկէց առաջ օրէնք մ'ունէինք, որ կը տրամադրէր թէ երեսփոխան մը եթէ երեք անգամ բացակայ գտնուի երրորդ անգամէն ետեւ հրաժարեալ կը համարուի: Այս օրէնքն անգործարկելի մնացած էր. հիմա ասոր տեղ նոր օրէնք մը պիտի քուէարկենք. այն է բացակայ երեսփոխանը փոխանակ երեք անգամէն ետեւ հրաժարեալ համարելու, չորս անգամէն ետեւ հրաժարեալ պիտի համարինք: Ինչպէս որ նոր դրուած օրէնք մը անցեալին վրայ ներգործութիւն չունի, նոյնպէս՝ նորը հաստատուած

ժամանակ չինք ոչնչացած կը համարուի: Ուստի քանի որ նորը կը զնենք՝ պէտք է որ այս օրուրնէ ետեւ գործարարուի :

ԳԱՓԱՄԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ես իբր Յանձնախմբին անդամ ֆախաղեան էֆէնտի խօսից մէջ սա զլխաւոր փաստը միայն կը տեսնեմ, այն է թէ՛ եւ ոչ իսկ երկտող նամակ կը գրեն, յորմէ կը կարծէ գիտնալ թէ ժողովը կանպատուեն: Սակայն ես այդ կարծիքէն չեմ. ինձ կը թուի թէ իրենց այս վարմունքը ժողովին ներքին կանոնադրութեանը կուտան. որ կը տրամադրէր թէ բացակայ երեսփոխանն որ կը տրամադրէր թէ բացակայ երեսփոխանն երեք անգամէն ետեւ հրաժարեալ կը համարուի: Այս տրամադրութեան ուժով զիրենք հրաժարեալ կը նկատեն եւ չեն գար: Բայց ժողովն որ մինչեւ ցարդ թոյլտուութեամբ վարուեր է այս տեսակ բացակայից առջեւ, ուզելով դարման տանիլ սոյն վիճակին, Յանձնախուճ մը կարգեց պէտք եղած դարմանը խորհելու համար. եւ ահա Յանձնախուճը իր բերած տեղեկագրով եզրակացութեան մը յանգեցուցած է այս կէտն, զոր Մատթէոս եւ պիսկոպոս կընդունի փոքրիկ բարեփոխութեամբ մը: Ես կը կարծեմ թէ լա՛ւ է այս մասին Յանձնախմբին բերած եզրակացութիւնն ամբողջ ընդունիլ, զի օրէնք ըսուած բանն ընդհանուրին համար է. եւ մասնաւորութիւն չընդունիր. պէտք է որ նոր օրէնքը գրուելէ ետեւ ներկայ եւ բացակայ երեսփոխանք ամենքը մէկ խմացուին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Նոյն իսկ Յանձնախմբին առաջարկութիւնն ալ նոյապատուր է իմինս. զի ժողովատեղին Ղալաթիա փոխադրուելէ ետեւ բացակայութիւնք չներուին կըսէ: Ըսել է այս թէ անկէ առաջ եղած բացակայութիւնք թող ներուին :

Սրդ՝ 11 նիստ է որ Ղալաթիա կընենք. անոնք՝ որ նիստերը Ղալաթիա չըլլալուն համար չէին գար, դարձեալ չեն գար. հարհամար չէին գար, դարձեալ չեն ձեռքերնին կաւ: Ա. նիստի ատենադրութիւնը ձեռքերնին հասած եւ կարդացած են եւ գիտեն որ նոր օրէնք մը պիտի գրուի իրենց համար: ու՛ր է,

ոչ կուգան, եւ ոչ երկտող գիր մ'իսկ կուղարկեն. այս բրածնին բաձարցակապէս անարգանք է ժողովին, ասանկներուն համար պարսաւանաց քուէ անգամ տալ հարկ է. բայց որովհետեւ մեր մէջ անուշ տեղը կապելու քաղաքակա- նութեան տէր մարդիկ շատ են, չեն ուզեր որ այս աստիճան խտտապահանջ ըլլանք:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես այդ տե- սակէտով չեմ ըմբռներ. անոր համար կ'ըսեմ թէ պատճառն այդ չէ. օրէնքը կը գործադ- րենք եւ անով հասկըցուցած կ'ըլլանք:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Ներկայ Երազիրն իբր օրէնք նկատելով, Ղալաթիա փոխադրու- ելէ ետեւ բացակայ երեսփոխանք պէտք է ե- ղեր որ հոս ներկայ գտնուին. ապա թէ ոչ հրաժարեալ համարուելու են: Ես չեմ յուսար որ Օրէնսգիր ժողով մը իրեն ներկայացեալ ծը- րագիր մը առանց քուէարկելու իբր օրէնք ընդունի: Ուստի չեմ ընդունիր որ ներկայ Երազիրը քուէով չընդունած անցեալ ժամա- նակի համար գործադրելի լինի:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ', քուէ':

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժամ է արդ՝ որ խըն- դիրն ամփոփենք եւ քուէի դնենք: Մինչեւ ցարդ եղած դիտողութիւնները լսեցինք. փա- փաղեան էֆէնտի վերջին ազդարարութիւն մ'ալ ուղղելու պայմանաւ բացակայ երեսփո- խաններն առ հասարակ Գ. բացակայ նկատել կ'ուզէ. իսկ Յանձնախմբին տեղեկագիրը նախ- կին բացակայութիւնները ներելով այսօրուրնէ ետեւ ի հաշիւ առնուլ կ'առաջարկէ, հաւա- նականաբար սա նկատմամբ որ՝ մինչդեռ այս մասին կեցած հին օրէնքը չէ գործադրուեր, այն ամեն երեսփոխան՝ որ քիչ կամ շատ բա- ցակայութիւն ունեցած է ցայսօր, կարող էր կամ ներկայ գտնուելով կամ բացակայութեան պատճառը ծանուցանելով, իր հաշիւը գրցել:

Այժմ քուէի դրուելիքն է տեղեկագրին եզրակացութիւնը, եւ անոր դէմ փափաղեան

էֆէնտի բարեփոխութիւնը. ըստ կանոնի նախ բարեփոխութիւնը քուէի կը դնեմ:

Եւ Ատենապետ էֆէնտին քուէի դնելով փափաղեան էֆէնտի բարեփոխութիւնը, ժո- ղովն Յ քուէի դէմ 14 քուէով ԿՐՆԴՈՒՆԻ զայն եւ այսպէս կը վերջացնէ բացակայութեան խըն- դիրը:

Սակայն փափաղեան էֆէնտի յայտարարելով թէ խնդրոյն յարակից դիտողութիւններ ունի ժողովին ներկայելու, Ատենապետ էֆէնտին խօսք կուտայ նմա:

ՓԱՓԱԶԵԱՆ Մ. ԷՖ. — Որովհետեւ ժողովոյ գումարման կանոնաւորութեանը կը վերաբե- րէր մեզ զբաղեցնող խնդիրը, այս՝ առթիւ հարկ է նախ ժողովոյն գումարման ժամը ճշդել. շատ անպատշաճ է ժամ նշանակել եւ հրաւիրագրին մէջ որոշեալ ժամուն ատեան չբանալ. ասկէց առաջ ձմեռուան համար փոխանակ 6ի ժամ 7 նշանակեցինք. այժմ կ'առաջարկեմ ժամը ճիշդ 7 1/2 ին բանալ ատեանը եւ 10 1/2 ին գրցել:

Երկրորդ նոր վարչութիւն հաստատուե- ցաւ եւ նոր եղանակաւ, որուն հակակշիռն է Ազգային ժողովոյ հսկողութիւնն եւ երեսփո- խանաց հարցման եւ հարցապնդման իրաւուն- քը: Ուրեմն պինդ բռնենք 15 օրն անգամ մը նիստ ընելու օրէնքնիս: Թերեւս վարչութիւնն ուզէ նիստերն յետաձգել. Յ շաբաթէն ընել եւ ատեանը ուշ բանալ տալ. արթուն կենանք. գործերն թոյլ վիճակին մէջ ձգելու չենք. այս ժողովն է որ պիտի հսկէ ազգին պաշտօ- նէից վրայ: Իմ կարծիքս է 15 օրն անգամ մը նիստ ընել անխափան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն անտարակոյս նկատողութեան պիտի առնու այն ամեն դիւ- րացուցիչ պարագայներն որք պէտք են ժողո- վոյ գումարմանց կանոնաւորութեան համար. այս տեսակ խնդիրներն իբր պարզ դիտողու- թիւն Դիւանին յիշեցնելով անցնիլը բաւական է. զի եթէ իբր առաջարկութիւն բերէք, խել մը կանոնական գործողութեանց կը կա- րօտի, որ աւելի յետաձգման տեղի կուտան. ուստի այսչտփով վերջացնենք խնդիրն: Ար-

դէն ուրիշ կարեւոր բաներ ունիմ ժողովին հաղորդելի:

Նախաքննիչ դիւաններու անդամոց ամբողջացում.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովն Ատենապե- տաց դիւանին յանձնելիք գործեր ունի, բայց զայն կազմելու համար նախ դիւաններէն ո- մանց ամբողջացումն հարկ է, զի անոնց ան- դամներէն ոմանք վարչութեան խորհրդական ընտրուեցան, եւ ըստ նոր օրինաց դադրեցան Նախաքննիչ դիւանաց անդամակցութենէ:

- Աւասիկ անոնց անուանքը.
- Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան,
- Զեռնհասութեան դիւանի
- Տիգրան էֆէնտի Եսուսեֆեան,
- Յարաբերութեան դիւանի
- Գարեգին էֆէնտի Մէլիքեան,
- Նախաձեռնութեան դիւանի:

Դիւանն ասոնց տեղ կ'առաջարկէ

- Տ. Գարեգին վարդապետ Թաթարեան,
- Զեռնհասութեան դիւանի
- Սեպուհ էֆէնտի Թիւրապեան,
- Յարաբերութեան դիւանի
- Նղիազար էֆէնտի Մելիքեան,
- Նախաձեռնութեան դիւանի

Երբ յիշեալ Դիւանները ամբողջանան, պիտի խնդրեմ իրենցմէ որ անմիջապէս իրենց ատենապետներն ընտրելով ծանուցանելու շը- նորս ընեն, եւ յառաջիկայ շաբթու մէջ Ա- տենապետաց դիւանն ի նիստ պիտի հրաւիրեմ:

Եւ Ատենապետ էֆէնտին վերոյիշեալ ընտ- րելեաց համար ժողովին քուէն խնդրելով, ժողովը միաձայնութեամբ կընդունի զանոնք:

Սոյն ընտրութեան վրայ, Ատենապետ է- ֆէնտին յայտարարելով թէ Համարակալու- թեան դիւանն իրեն ատենապետ ընտրած է փափաղեան Ստեփան էֆէնտին, կը հրաւիրէ միւս դիւաններն ալ իրենց ատենապետներն ընտրել անյապաղ:

ՓԱՓԱԶԵԱՆ Մ. ԷՖ. — Ելմտական յանձ- նախուժը չ'ընտրուեցաւ. անոր ալ անդամ- ներն առաջարկեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գալ նիստին ընտրել- եաց ցանկը կը բերենք: Այժմ դիւանն ուրիշ պարտականութիւն մ'ունի կատարելիք:

ՄԱՀ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յաւալի է որ մեր ա- թոռակիցներէն մին, տօքթէօր Մէզպուրեան էֆէնտի այսօր իր մահկանացուն կը կնքէ: Երիտասարդ հասակի, որոյ յուղարկաւորու- թիւնը վաղը պիտի կատարուի: Այս երեսփո- խանն ինչպէս կը ճանչէք՝ իր սլաշտօնը ճըշ- դիւ կատարողներէն մին էր, եւ մեր ամե- նուն համակրութիւնը վայելող անձ մը: Ի ըս- կըղբան վարժապետ, յետոյ բժշկութեան հա- մար ուսանող յեւրոպա, տօքթէօրութեան վկայական ստանալով վերադարձած էր, եւ մի քանի տարուան մէջ տուած փորձերովը մեծ ապագայ ունենալ կը խոստանար. երբ յանկարծ անգութ մահն յափշտակեց զայն մեր ձեռքէն: Կը հրաւիրեմ ժողովն՝ որ տօքթէօր Մէզպուրեան էֆէնտի ազգային երեսփոխա- նին յիշատակի համար իւրաքանչիւրոցս ունե- ցած յարգանքը միահամուռ ընծայելու համար, հաճի ոտքի ելնելով իւր ցաւակցութիւնը յայտ- նել հանդիսապէս:

Երեսփոխանք միահամուռ յոտին կանգ- նելով իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ որում հան- գուցելոյն յուղարկաւորութիւնը վաղը պիտի կատարուի, կ'առաջարկեմ պատգամաւորու- թիւն մը ընտրել, որ ներկայ գտնուի ի դի- մաց ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեմ կրնար ենթադ- րել թէ որ եւ է երեսփոխան, երբ լսէ իր ըն- կերակցին մահն եւ բանաւոր արգելք չ'ունե- նայ, չ'երթայ անոր ուղարկաւորութեանը:

այսու հանդերձ շատ կարելի է թէ եւ սլատ-
 դամաւորութիւն մը նշանակել, որ ի պաշտօ-
 նէ ներկայ գտնուի բարեյիշատակ տօքթէօր
 Մէզպուրեանի յուզարկաւորութեան, բայց նը-
 կատառութեան արժանի կէտ մը կայ, եւ սա
 է որ պաշտօնապէս ընծայելի սոյնօրինակ յար-
 զանքն ամեն երեսփոխանի համար հաւասա-
 րապէս գործադրելի դրութեան մ'ենթարկեալ
 պէտք է լինի: Եւ ըստ որում ժողովն հանա-
 սլազօրեայ չէ, եւ ամեն երեսփոխանի մահը
 դումարման օրը չը պատահիր, որ կարելի ըլ-
 լայ պատգամաւորութիւն ղրկել, ուստի այս-
 ոյիսի բացառիկ տնօրէնութիւն մը իւր անպա-
 տեհութիւնները կրնայ ունենալ, որք պէտք է
 այժմէն նկատողութեան առնուին:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Շատ
 իրաւացի է Ատենապետ էֆէնտիի դիտողու-
 թիւնը, Ազգային ժողովն երբ դրութիւն
 մ'ընդունի, հաւասարապէս ամենուն համար
 գործադրելի պէտք է լինի այն: Ուստի ես
 պիտի առաջարկեմ, որ երբ երեսփոխանի մը
 մահը պատահի, Գիւանին տեղեկութիւն տրը-
 ուի անմիջապէս, եւ Ատենապետն արտօնու-
 թիւն ունենայ ի դիմաց ժողովին պատգամա-
 ւորութիւն մ'ընտրել եւ ղրկելու:

ԱՄԵՆ ԿՈՂՄԷ. — Շատ աղէկ, շատ ա-
 ղէկ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարի բանաւոր է Տ.

Մատթէոս եպիսկոպոսի առաջարկութիւնն եւ
 ամեն ասան գործադրելի: Եւ ըստ որում ընդ-
 հանուր հաւանութիւն կը գտնէ, այսուհետեւ
 ի գործ կը դրուի: Հետեւաբար պատգամաւո-
 րութեան համար կառաջարկուին,


- Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեան.
- Ատենաղայիք էֆէնտի
- Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան.
- Աբրահամ » Այվազեան.
- Մինաս » Գափամաճեան.
- Գէորգ » Վարդանեան.

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Որով-
 հետեւ իմ պատանեկութեան տոնես Տօքթէօր
 Մէզպուրեանի տեսչութեան տակ Պէզճեան
 վարժարանին մէջ առած եմ իմ նախնական
 ուսմունքս, կառաջարկեմ որ անոր յուզար-
 կաւորութեան երթալիք պատգամաւորու-
 թեան մէջ զիս ալ նշանակէք:

Ժողովն այս առաջարկը ԿԸՆԴՈՒՆԻ ԵՎ Տ.
 Մատթէոս եպիսկոպոսը վերոյիշեալ հինգ ա-
 ռաջարկելոց հետ պատգամաւոր կը նշանակէ
 հանգուցեալ տօքթէօր Մէզպուրեան երեսփո-
 խանին յուզարկաւորութեան ներկայ գտնուե-
 լու համար:

Ատենը կը փակուի ի ժամ 10 1/2 ին:

Ատենաղայիք Ատենապետ
 Մ. Յ. ՄԷԼԻՔԵՆ Թ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ



ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ

ԳՆՆՈՒՄ ԳՆՆՈՒՄ ԳՆՆՈՒՄ

ԳՆՆՈՒՄ

ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ

ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ

ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ

ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ ԿՈՂՄԷ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն նախընթաց Թ. Նիստի Ատենագրութեան
2. Հրաժարական :
3. Պաշտօնագիր Եկեղեցական վիճակային ժողովոյ :
4. Միջադէպ :
5. Պաշտօնագիր Սրբազան Պատրիարք Հօր :

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Հրաժարում Մայր դիւանի անդամոց եւ ընտրութիւն .
- Բ. Խնդիր տեղափոխութեան եւ բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկագիր Յանձնախմբին :

Գլխ 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը եւ Հայ գրավաճառաց բով